մայն մոցէ անօրէնութիւն 'ի մէնջ, զի վաղիւն դու փորես աչք եղբօր քոյ, միւսն յափշտակէ զինչ դրացւոյն, միւսն բռնադատէ կուսի պատուոյ և այլն, ըստ բանին մարգարէին պատճառելով ըստ պատճառ մեղաց ընդ մարդ որ գործէ զանօրէնութիւն, այնպիսի աւերի Օրէնս սահմանս որպէս այժմոյս աւերեալ կայ և հոտի երկիր 'ի գարշութենէ անօրէնութեան, թարշամի բնակօղք, խոնարհի ազատութիւն և անպատիւ այլազգիքն իշխեսցեն 'ի վերայ մեր, և 'ի պատճառէ անկարգութենէ ոչ թէ միայն թշուառանամք, ազգաւ նաև ամօթալից լինիցիմք 'ի յերեսս երկրի պարտաւոր Տեառն Արարչին մերոյ և կատարումն 'ի գեհեն պատժոյ մնամք։

Երկայնամիտ լերուք 'ի վերայ յանցանաց անցելում ժամանակի և 'ի վերայ այսմ ժամանակիս որ 'ի միջի կամք 'ի վերայ գործոցն ինքնակալ իշխանաց և ինքնակամ հրամայեցելոց, որ թէպէտ նոքայ ոչ պակասեցան պատրաստիլ անձինս իւրեանց ամրանալով 'ի միջի ամուր պարսպեալ բերթօրէից և 'ի միջի փակեալ դրօք պալատից և ներքոյ պահպանութեան հաւատարիմ ծառայից պահակի և ամենայն զգոյշութիւն պահպանութեամբ որքան կարն իւրեանց հասու եղև և 'ի միտս իւրեանց ձկտեցաւ զինքեանց ապահով առնել, այլ ընթեռնուլ կարեմք 'ի պատմութիւնն անցելոյն ժամանակի և բազմից ըն-